ԿԱՆԹԵՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Եկատերինա II

ԿԱԶՄՈՂ՝ Աննա Հարությունյան

ԽՈՒՄԲ՝ Պատմություն

2023թ.

Եկատերինա II

(1762-1796)

ՊԼԱՆ

Ներածություն

1.Եկատերինա 2-րդի արտաքին քաղաքականությունը

ա/ Ռուս –թուրքական պատերազմը 1768-74թթ.

բ/ Գեորգիևյան դաշնագիրը

գ/ Ռուս-թուրքական 1787-91թթ պատերազմը

դ/ ԱՄՆ-ի կազմավորումն ու Ռուսաստանը

ե/ Լեհաստանի բաժանումները

զ/ Ցարիզմի պայքարը հեղափոխական Ֆրանսիայի դեմ

2.Եկատերինա 2-րդի ներքին քաղաքականությունը

ա/ Գյուղատնտեսությունը

բ/ Արդյունաբերությունը

գ/ Արտաքին և ներքին առևտուրը

դ/ Ֆինանսները

ե/ Դասային կառուցվածքի ամրապնդումը

զ/ Լուսավորյալ միապետություն

է/ Եկատերինա 2-րդը որպես լուսավորյալ միապետ

ը/ Ն.Ի. Նովիկովը <<Վսյակայա Վսյաչինայի>> դեմ

թ/ Ե. Պուգաչովի գյուղացիական ապստամբությունը 1773-75թթ.

ժ/ Եկատերինա 2-րդի բարեփոխումները

ի/ Ազնվականությանը և քաղաքներին տրված շնորհագրերը

լ/ Կրթական բարեփոխում

խ/ Ա.Ն. Ռադիշչև

Վերջաբան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1762 թ.պալատական հերթական հեղաշրջումից հետո գահակալեց դավադրության զոհ դարձած Պյոտր 3-րդի հավատարիմ կինը ՝ Սոֆիա Ավգուստինա Ֆրեդերիկա Անհալտ Ցերբսկայան, որը ռուսաց կայսրության պատմադիվանագիտական տարեգրության մեջ հայտնի է Եկատերինա 2-րդ անունով, ով հորջորջվում էր նաև <<Հյուսիսային Շամիրամ>> անունով:Նա բացառիկ խելքի տեր էր, կիրթ, զարգացած, գրելու և հումորի մեծ ձիրքով , պետական, քաղաքական , դիվանագիտական ոլորտում բավականաչափ հեռատես գործիչ:

Լինելով ազգությամբ գերմանուհի՝ Եկատերինա 2-րդը անմնացորդ ծառայեց ու մեծ բարձունքի հասցրեց ռուսաց կայսրությունը և նրա հենքին ՝ ազնվականությանը: Դրա համար էլ արտոնյալ դասը այդ ժամանակաշրջանը որակեց որպես իր <<ոսկե դարը>>:

Հիրավի, լուսավորյալ միապետուհու կառավարման ժամանակաշրջանում ռուսաց կայսրությունը հասավ աննախադեպ ռազմաքաղաքական բարձունքի, որը միջազգային իրավունքի շրջանակներում օրինականացվում և նյութականացվում էր դիվանագի տության կլոր սեղանների շուրջ:

Եկատերինա 2-րդը թագադրվեց 1762թ. սեպտեմբերի 22-ին և կառավարեց 18-րդ դ գրեթե ամբողջ 2-րդ կեսը (1796թ.) : Նա կարողանում էր ճիշտ ընտրել իր օգնականներին՝ քաղաքական գործիչներին, ռազմական առաջնորդներին , ինչպիսիք էին Պանինը, Բեզբորոդկոն, Պոտյոմկինը, Վյազեմսկին, Դերժավինը, Բեցկոյը Ռումյանցևը, Սուվորովը, Ուշակովը և այլոք: Նրանց օգտագործում էր, ինչպես ինքն էր նշում. <<Յուրաքանչյուրին իր ընդունակություններին համապատասխան>>:[3]

Լայնածավալ ու բազմաբովանդակ էին Եկատերինա 2-րդի արտաքին ու ներքին քաղաքականության ուղղությունները:

ԵԿԱՏԵՐԻՆԱ 2-ՐԴԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

18-րդ դարի Ռուսաստանի արտաքին քաղաքականության խնդիրները հետևյալներն էին՝

1. Ելք ունենալ դեպի Սև և Ազովի ծովեր
2. Լեհական խնդիրը (18-րդ դարի 3-րդ քառորդում)
3. Պայքարը հեղափոխական Ֆրանսիայի դեմ
4. Հարավ-արևմտյան սահմանների կայունության պահպանումը:

ա/ ՌՈՒՍ- ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 1768-1774ԹԹ.

Ռուսաստանին հարավում ակտիվ գործողությունների մղեց երկրի անվտանգության ապահովումը, ազնվականության ՝ հարավի հողերին տիրանալու ձգտումը, ինչպես նաև դեպի Սև ծով ելք ունենալու պահանջը, որը թելադրում էր զարգացող արդյունաբերությունն ու առևտուրը:

Սակայն Թուրքիան համարում էր իրեն Սև ծովի միակ տերը, ուստի պատահական չէ, որ ոգևորվելով ավստրիական և ֆրանսիական դիվանագետների կողմից տված խոստումներից , սուլթան Մուստաֆա 3-րդը 1768թ. նոյեմբերի 25-ին պատերազմ հայտարարեց Ռուսաստանին: Բայց Յոթնամյա պատերազմում զգալիորեն թուլացած Ավստրիան և Ֆրանսիան , ինչպես նաև Շվեդիան և Պրուսիան դեռևս լիովին չէին վերականգնել իրենց ներուժը, և նման պարագայում Թուրքիայի հույսերը ՝ ստանալ արտաքին օգնություն , զուրկ էին լուրջ հիմքերից:

Ռազմական հիմնական գործողությունները սկսեցին 1769թ. Մոլդովիայի և Վալախիայի տարածքներում և մերձազովյան շրջաններում : Հաղթարշավով ռուսական բանակը դուրս եկավ Դանուբի ափերը : Նավատորմն էլ իր հերթին Չեսմենյան ծովախորշում լիովին ոչնչացրեց թուրքական նավատորմը 1770թ. հունիսին: 1771թ. ռուսները գրավեցին Ղրիմը , շրջափակեցին Դարդանելի նեղուցը , որով ոչ միայն ընդմիշտ վերացավ տեղի թաթարների ավերիչ ասպատակությունները , այլև Թուրքիային կանգնեցրեց աղետի առաջ:

1774թ. Սուվորովը մեծ վեզիրի զորքը ջախջախեց Կոզլուջայի մոտ, ձեռք բերելով տպավորիչ հաղթանակ , նա Ռումյանցևի գլխավորած ռուսական բանակի հիմնական ուժերի համար ճանապարհ բացեց դեպի Կ. Պոլիս: Թուրքիան ստիպված էր հաշտություն խնդրել :

Մինչ այդ հաշտության փորձեր արվել էին Ֆոկշանում, Բուխարեստում, բայց ձախողվել էին թուրքերի անհաշտ և թշնամական դիրքորոշման պատճառով: Թուրքական պատվիրակությունը պահանջում էր վերականգնել Օսմանյան կայսրության իրավունքները Հյուսիսային Մերձսևծովյան տարածքների նկատմամբ :

Բայց պարտված Թուրքիայի համար նպատակին հասնելն անիրատեսական էր: Դա ակնհայտ դարձավ , երբ 1772թ. նոյեմբերի 1-ին Ռուսաստանը հաշտություն կնքեց Ղրիմի խանի հետ, որով Ղրիմը հայտարարվում էր Թուրքիայից անկախ և Ռուսաստանի ենթահովանավորյալ տարածք:

Ռուսաստանի ներքաղաքական իրադրությունը , կապված Պուգաչովյան պատերազմի հետ , պահանջում էր հաշտության շուտափույթ կնքում:

1774թ. հուլիսի 10-ին բուլղարական Քյուչուկ-Կայնարջի գյուղում կնքած պայմանագրով՝

1. Ռուսաստանը ազատ ելք էր ունենալու Սև ծով
2. Իրավունք ուներ Սև ծովում պահել նավատորմ, ազատ երթևեկել Բոսֆորի և Դարդանելի նեղուցներով
3. Ազովը, Կերչը Կուբանը, Կաբարդինիան անցնում էին Ռուսաստանին
4. Բարձր Դուռը պարտավորվում էր ապահովել Օսմանյան կայսրության հպատակներին՝ քրիստոնյաներին, իրենց կրոնը դավանելու ազատություն
5. Ղրիմի խանությունը ճանաչվում էր Թուրքիայից անկախ
6. Թուրքիան պարտավորվում էր վճարել 4 մլն ռուբլի ռազմատուգանք:[1]

Այս կապակցությամբ հայտնի արևելագետ Տ. Յուզեֆովիչը գրում է . << Մեր տարածքային ձեռքբերումներն այնքան կարևոր չէին հաշտություն կնքելու պահին, որքան Թուրքիայի տիրապետության տակ գտնվող իր հավատակիցներին պաշտպանելու Ռուսաստանի ստացած իրավունքը>>:[1]

Ռուս-թուրքական պատերազմի հաջող ավարտից օգտվեցին Բալկանյան թերակղզու ժողովուրդները և ծավալեցին ազգային-ազատագրական պայքար ընդդեմ թուրքական լծի: Իրենց ինքնավարությունը վերականգնեցին Մոլդովիան և Վալախիան , որոնք ընդունեցին Ռուսաստանի հովանավորությունը: Սկսվեց Ուկրաինայի հարավի յուրացումը:

Սակայն Թուրքիան չէր հաշտվում Քյուչուկ- Կայնարջիի առաջադրած կետերի հետ , նա աստիճանաբար սկսեց հրաժարվել ռազմատուգանք վճարելուց , պահանջեց վերադարձնել Կինբուռնը, հրաժարվեց ճանաչել Ղրիմի անկախությունը և սկսեց նախապատրաստվել Ռուսաստանի դեմ հերթական պատերազմի , որպեսզի չեղյալ հայտարարի Քյուչուկ –Կայնարջիի պայմանագիրը:

Այսպիսով, Ղրիմը դարձավ կռվախնձոր Ռուսաստանի և Թուրքիայի միջև և ի վերջո հանգեցչեց պատերազմի:

բ/ ԳԵՈՐԳԻԵՎՅԱՆ ԴԱՇՆԱԳԻՐԸ

1783Թ. Գեորգիևսկում (Հյուսիսային Կովկաս) վրացական Հերակլ 2-րդ թագավորի և Ռուսաստանի միջև կնքվեց պայմանագիր պրոտեկտորատի մասին: Ռուսաստանը համաձայնեց իր հովանավորության տակ առնել Արևելյան Վրաստանը:

գ/ ՌՈՒՍ- ԹՈՒՐՔԱԿԱՆ 1787-91ԹԹ. ՊԱՏԵՐԱԶՄԸ

1787թ.ի օգոստոսին Թուրքիայի կառավարող շրջանները, Ռուսական կայսրությանը մեղադրելով Քյուչուկ- Կայնարջիի պայմանագիրը խախտելու մեջ, պատերազմ հայտարարեցին Ռուսաստանին: Այս պատերազմի ժամանակ էլ ի հայտ եկավ եվրոպական երկրների թուրքամետ կողմնորոշումը, որոնք վախենում էին Ռուսաստանի հզորացումից և Սև ծովում նրա դիրքերի ամրապնդումից: Հատկապես ակնհայտ էր Անգլիայի թշնամական դիրքորոշումը Ռուսաստանի նկատմամբ : Նա դեմ էր Սև ծովում և հատկապես Միջերկրական ծովում, ռուսական նավատորմի առկայությանը : Անգլիան, անհաջող ավարտելով Հյուսիսային Ամերիկայի անկախության դեմ պատերազմը, ազատ էր և կարող էր միջամտել ռուս-թուրքական հարաբերություններին: Սակայն Թուրքիային մեծ օժանդակություն կարող էին ցույց տալ Շվեդիան և Պրուսիան, որոնք էլ ունեին սահմանափակ հնարավորություններ:

Շվեդիայի թագավորը , օգտվելով ռուս-թուրքական պատերազմից և Անգլիայի թշնամական դիրքորոշումից 1788 թ. Ռուսաստանից պահանջեց վերացնել Նիշտադտյան և Քյուչուկ- Կայնարջիի պայմանները : Այսինքն Շվեդիան փորձում էր հետ վերադարձնել Հյուսիսային պատերազմում կորցրած տարածքները:

Ավելին , Շվեդիան առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց Ռուսաստանի վրա : Ռուսաստանը ստիպված էր 2 ռազմաճակատով պատերազմ վարել : Ռուս-շվեդական կռիվները մղվում էին Պետերբուրգի մոտ, երբ ռուսական հիմնական զորքերը կռվում էին հարավում Թուրքիայի դեմ: Մարտադաշտում ,սակայն, Շվեդիան մի քանի ծանր պարտություններ կրելով , հարկադրված եղավ հաշտություն խնդրել: Ավելին , ռուսները բավականին մեծ տարածք գրավեցին շվեդական Ֆինլանդիայում:

Ի վերջո 1790թ. ֆիննական Վերել գյուղում կնքվեց հաշտության պայմանագիր նախապատերազմյան սահմանները ճանաչելու պայմաններով:[5]

Անգլիան Ռուսաստանի դեմ պատերազմից խուսափեց հաշվի առնելով ռուս-անգլիական առևտրական հարաբերությունները և ռուսական բանակի ու նավատորմի հաղթանակները:

Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Ա. Սուվորովը ջախջախեց թուրքական զորքերին Կինբուռնում (1787թ.) , Ֆոկշանում և Ռիմնիկ գետի մոտ (1789թ), որի համար ստացավ <<Ռիմնիկյան կոմս>> տիտղոսը:

1788թ. երկարատև պաշարումից հետո Գ. Պոտյոմկինը գրոհով վերցրեց << Սև ծովի բանալի>> հանդիսացող թուրքական ամրոց Օչակովոն:

Կարևոր նշանակություն ուներ Իզմայիլ ամրոցի գրավումը Դանուբի մոտ (1790թ.) 10-ժամյա գրոհից հետո Սուվորովի աշակերտ , հետագա նշանավոր զորավար Մ. Կուտուզովի կողմից:

Ցամաքի հաղթանակներն ուղեկցվում էին ծովային հաղթանակներով: Ռուսական նավատորմը ՝ հրամանատար Ֆ. Ուշակովի գլխավորությամբ հաղթանակ տարավ Կերչի նեղուցում , որից հետո Սև ծովը ռուսական նավատորմի համար դարձավ ազատ: Երբ 1791թ. Կալիակրա հրվանդանի մոտ տեղի ունցած ճակատամարտում թուրքական նավատորմը պարտություն կրեց, Թուրքիան ստիպված էր հաշտություն խնդրել:

1791 թ. հաշտության պայմանագիրը կնքվեց Յասսիում , ըստ որի՝

1. Թուրքիան ճանաչում էր Ղրիմը որպես Ռուսաստանի տարածք, և 2 երկրների սահմանը դառնում էր Դնեստր գետը : Ռուսաստանին էր անցնում Բուգ և Դնեստր գետերի միջև ընկած տարածքը
2. Թուրքիան ճանաչում էր Գեորգիևյան դաշնագիրը (1783թ.)՝ Ռուսաստանի հովանավորությունը Արևելյան Վրաստանի վրա:

Ընդլայնվեցին կապերը Միջերկրականի երկրների հետ, վերացավ Ղրիմի խանությունը , որը մշտական լարվածության աղբյուր էր ուկրաինական և ռուսական հողերի համար: Ռուսաստանի հարավում հիմնադրվեցին Նիկոլաև , Օդեսա, Եկատերինոդար (Կրասնոդար) քաղաքները:

Այսպիսով, Եկատերինա 2-րդի ժամանակաշրջանի ռուսական դիվանագիտությունը հիմնականում լուծեց դեռևս 17դ ժառանգած խնդիրները.

1. Ամրապնդվեցին Պյոտր 1-ին Մեծի ձեռքբերումները Մերձբալթիկայում
2. Ռուսաստանին միացվեցին բելառուսական և ուկրաինական ժողովուրդներով բնակեցված տարածքները

3. Ռուսաստանը ամուր հաստատվեց Սև ծովում
4. Ռուսական կայսրությունը վերականգնեց վճռորոշ ձայնի իրավունքը համաեվրոպական հարցերում:

Եկատերինա 2-րդի արտաքին քաղաքականության մեջ արդեն հստակ երևում էր 19-րդ դարի ցարիզմի քաղաքականության էական գծերը ՝ Բալկանյան թերակղզու նկատմամբ նկրտումները , Անգլիայի ծովային գերազանցության թուլացումը միջազգային կապերի սահմանափակման միջոցով , միջամտություն գերմանական պետությունների գործերին:[4]

դ/ ԱՄՆ –Ի ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

18 դ 3-րդ քառորդում դարակազմիկ նշանակություն ունեցավ ամերիկյան գաղութների՝ Անգլիայի դեմ անկախության համար մղված պատերազմը, որի արդյունքում ձևավորվեց ԱՄՆ-ը: Սրանում իր կարևոր դերն ունեցավ Ռուսաստանը ՝ ի դեմս Եկատերինա 2-րդի: Վերջինս, ելնելով միապետական շահերից, չաջակցեց այդ բուրժուական բնույթ ունեցող հեղափոխությանը, բայց իր չեզոքությամբ արագացրեց ԱՄՆ-ի կազմավորումը:

1780թ-ին ռուսական կառավարությունն ընդունեց << Ռազմական չեզոքության դեկլարացիան>>, որն ընդունվեց մի շարք եվրոպական երկրների կողմից: Բանն այն էր, որ Անգլիան փորձում էր տնտեսական շրջափակման միջոցով ծնկի բերել ամերիկյան գաղութներին: Բայց այդ դեկլարացիան պաշտպանում էր չեզոք երկրների վաճառական նավերին և թույլ էր տալիս առևտուր անել գաղութների հետ , որն էլ չեզոքացնում էր Անգլիայի ծովային տնտեսական շրջափակումը: Դա էլ օբյեկտիվորեն նպաստեց Ամերիկյան հեղափոխության հաղթանակին:

գ/ ԼԵՀԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

18դ 2-րդ կեսից միջազգային հարաբերությունների համակարգում մեծ տերությունների ուշադրությունը սևեռվեց լեհական հիմնախնդրին: Ռեչ Պոսպոլիտայի բաժանման համար միմյանց հետ պայքարում էին Ռուսաստանը, Պրուսիան և Ավստրիան : Կենտրոնական իշխանությունը Ռեչ Պոսպոլիտայում թուլացել էր . թագավորն ընտրվում էր սեյմում և դառնում լեհական շլյախտայի ու մագնատների ձեռքին խաղալիք: Սեյմում երկրի վերնախավի տարբեր խմբավորումները, մրցակցելով և պայքարելով միմյանց դեմ, հաճախ անտեսում էին

ազգային խնդիրները և պետական շահերը, օգնություն էին փնտրում արտասահմանում կամ փորձում էին հենվել օտար ուժերի վրա: Դեռևս գործում էր <<լիբերում վետոյի>> սկզբունքը (ազատ արգելքի իրավունքը), որի համաձայն սեյմի որոշումը պետք է ընդունվեր միաձայն (նույնիսկ մեկ <<դեմը >>չեղյալ էր դարձնում օրենքի ընդունումը):[5]

Ռուսական կայսրությանը գրազանցապես հետաքրքրում էին ուկրաինական և բելառուսական տարածքները կայսրությանը միացնելու, ապա նաև Լեհաստանում լիովին քաղաքական գերիշխանություն հաստատելու հիմնահարցը: Այդ քաղաքական խնդիրը լուծելու համար անհրաժեշտ էր հաղթահարել Պրուսիայի և Ավստրիայի դիմադրությունը:

Ռեչ Պոսպոլիտայի բաժանման գաղափարը Ռուսաստանի և Պրուսիայի միջև 1763թ առաջարկել էր Ֆրիդրիխ 2-րդը.: Սակայն Եկատերինա 2-րդը և Պանինը երկար ժամանակ ձգձգում էին ֆրիդրիխ 2-րդի առաջարկի պատասխանը: Վերջինս, հավանաբար կռահելով Եկատերինա 2-րդի հեռահար նպատակը , որոշեց աջակցություն ստանալ Ավստրիայից, մանավանդ որ նա էլ էր շահագրգռված Ռեչ Պոսպոլիտայի բաժանմամբ : Նրանք երկուսն էլ համոզված էին, որ Ռուսաստանը այդ պահին կհամաձայնվեր իրենց հետ, քանի որ չէր ցանկանա ռուս-թուրքական ընթացող պատերազմի ժամանակ վատացնել հարաբերությունները : Եկատերինա 2-րդը շատ լավ հասկանում էր , որ եթե ձգձգի, ապա կարող է ընդհանրապես կորցնել իր բաժինը Ռեչ Պոսպոլիտայից:[3] Ռուսական կայսրությունը լեհական գործերին միջամտելու համար հմտորեն օգտագործեց ոչ կաթոլիկ քրիստոնյա բնակչության շահերը պաշտպանելու պատրվակը:

Դեռևս 1764թ. Ռուսական կայսրությունը լեհական թագավորի հետ համաձայնություն էր ձեռք բերել ուղղափառների ու կաթոլիկների իրավունքները հավասարեցնելու հարցում : Սակայն լեհական շլյախտայի մի մասը , ստանալով Հռոմի պապի աջակցությունը, դեմ էր դուրս եկել այդ համաձայնությանը:

Եկատերինա 2-րդի կառավարությունը զորք էր ուղարկել Լեհաստան ճնշելու շլյախտայի ելույթները : Միաժամանակ Պրուսիան և Ավստրիան Լեհաստանում տարածքներ էին օկուպացրել:

Լեհաստանի 1-ին բաժանումը տեղի ունեցավ 1772թ.-ին : Ավստրիան զավթեց Գալիցիան (Արևմտյան Ուկրաինան), Պրուսիան ՝ լեհական Պոմորիեն: Ռուսաստանը ստացավ Արևելյան Բելառուսիան մինչև Մինսկ և լատվիական տիրույթների մի մասը, որոնք նախկինում մտնում էին Լիվոնիայի մեջ: [5]

Լեհական ազնվականությունը փորձեց վերականգնել Լեհաստանի պետական ամբողջականությունը : Այս նպատակով 1791թ-ի սահմանադրությամբ վերացրին թագավորի ընտրությունը և <<լիբերում վետոյի >> իրավունքը, սեյմում թույլատրվեց

3-րդ դասի մասնակցությունը, մտցվեց դավանանքի ազատությունը: Սահմանադրությունն ընդունվեց այն ժամանակ , երբ Ֆրանսիայում ընթանում էր Մեծ հեղափոխությունը: Զգուշանալով <<հեղափոխական վարակի>> տարածումից և երկրում իրենց հեղինակությունը կորցնելու վտանգից՝ լեհական մագնատները դիմեցին Եկատերինա 2-րդին: Ռուսական բանակը , որին միացավ պրուսականը , մտավ Լեհաստան: Լեհական բանակը դադարեցրեց դիմադրությունը: 1793թ.- ին Ռուսաստանը և Պրուսիան 2-րդ անգամ Ռեչ Պոսպոլիտան բաժանեցին: Ռուսաստանին անցավ Կենտրոնական Բելառուսիան , Աջափնյա Ուկրաինան, Պրուսիային՝ Գդանսկը , Տորունը, Մեծ Լեհաստանի որոշ տարածքները, Վարտա և Վիսլա գետերի հատվածում եղած հողերի մի մասը:

1794թ-ին Լեհաստանի հայրենասերները գեներալ Տադեուշ Կոստյուշկոյի գլխավորությամբ ազգային-ազատագրական ապստամբություն սկսեցին , որի նպատակն էր վերականգնել Լեհաստանի տարածքային ամբողջականությունն ու պետականությունը:[5] Սակայն Եկատերինա 2-րդը ճնշեց այդ ապստամբությունը Սուվորովի գլխավորած ռուսական բանակով: Սրանից հետո Լեհաստանը բաժանվեց երրորդ անգամ : Կենտրոնական Լեհաստանը Վարշավայով անցավ Պրուսիային , հարավային Լեհաստանը՝ Ավստրիային , իսկ Ռուսաստանին՝ Լիտվան Կուռլանդիան , Վոլինը, Արևմտյան Ուկրաինան: Ինչպես Եկատերինա 2-րդն էր գրում . <<Լեհական պետության կայուն և ուժեղ կառավարում հաստատելու բացահայտ անկարողությունը հարկադրեցին 3 միապետներին իրականացնել նրա լիակատար բաժանումը>> : <<Լեհաստանն ընկավ,-գրում է Էնգելսը,-բայց նրա դիմադրությունը փրկեց Ֆրանսիական հեղափոխությանը>>:[1] Իսկապես , ռազմաքաղաքական իրադարձությունները Լեհաստանում 18դ 70-90-ական թթ իրենց վրա գամեցին Եվրոպայի միապետների ուշադրությունը, որը հնարավորություն ընձեռեց Ֆրանսիական հեղափոխությանը դիմադրել ու հաղթել ներքին միապետական ուժերին, որոնք այդ տերություններից չստացան էական օգնություն: [1]

Ե/ ՑԱՐԻԶՄԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՄ

1789թ. Ֆրանսիայում սկսեց բուրժուական հեղափոխություն: Ապստամբ ժողովուրդը Փարիզում հուլիսի 14-ին գրավեց Բաստիլի ամրոցը և երկրում հաստատեց բուրժուական կարգեր: Ֆրանսիական մեծ հեղափոխությունը նշանակալից ազդեցություն ունեցավ համաշխարհային պատմության ընթացքի վրա:

<<Ֆրանսիական վարակի >> կամ <<այդ սարսափելի հրեշի>> (ինչպես հեղափոխությունն անվանում էին ազնվականները) վախը ստիպեց Եկատերինա 2-րդին ձեռնարկել ամենավճռական միջոցները հակահեղափոխականներին օգնելու

գործում:[5] Լուի 16-ի մահապատժից հետո Ռուսաստանը դիվանագիտական և տնտեսական կապերը խզեց Ֆրանսիայի հետ : Արգելվեցին ֆրանսիական լուսավորականների աշխատությունների տարածումը Ռուսաստանում : Անգլիայի հետ միասին Ռուսաստանը փորձեց տնտեսական ճնշում գործադրել Ֆրանսիայի վրա: Ռուսաստանի ներսում առաջադեմ մարդկանց նկատմամբ հետապնդումներ սկսեցին : Այդ ժամանակ էր որ Սիբիր աքսորվեցին Ա. Ռադիշչևը և Ն. Նովիկովը: 1794թ. Լեհաստանի ապստամբությունը խանգարեցին Եկատերինա 2-րդին լրջորեն դեմ դուրս գալ Ֆրանսիային :

Այսպիսով, ամփոփելով Եկատերինա 2-րդի վարած արտաքին քաղաքականությունը կարող ենք ասել, որ Եկատերինան իր գործունեության առաջին իսկ օրից սկսած ակտիվ մասնակցություն էր ունեցել երկրի արտաքին քաղաքականության մեջ: Ոչ մի լուրջ հարց չի վրիպել նրա ուշադրությունից և ոչ մի պատասխանատու որոշում առանց նրա մասնակցության չի ընդունվել : <<Ես ինքս եմ ցանկանում կառավարել, և այդ մասին թող Եվրոպան իմանա >>, - ասում էր նա Պոտյոմկինին: Նա լավագույնս տիրապետում էր դերասանական արվեստին , որը 18-րդ դարում և հետագայում համարվում էր դիվանագետի գլխավոր հատկանիշը:[4] Եկատերինան որպես դիվանագետ և խելացի կին , հասկանում էր ,որ իր կառավարած երկրի արժանապատվությունը նաև իրենն է: Նա դիվանագիտական ելույթների ժամանակ, իրեն դրսևորում էր իբրև ազգային քաղաքականության պաշտպան և չէր բաժանում իր անձը Ռուսաստանից:

ԵԿԱՏԵՐԻՆԱ 2-ՐԴԻ ՎԱՐԱԾ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ա/ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսաստանի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն էր : Նկատվում էր ճորտատիրության տարածում , գյուղացիների նկատմամբ շահագործման ու անօրինականության մեծացում:

Նովոռոսիայի (Ուկրաինայի հարավ, Մերձսևծովյան շրջաններ) բարեբեր, բայց քիչ բնակեցված հողերում կալվածատերը կարող էր բնակեցնել իր գյուղացիներին, պետությունից ստանալով 1.5-12000 դեսյատին հող: 60-ական դեսյատին կարող էր ստանալ ցանկացած ոք, բացի մասնավոր ճորտերից , ներառյալ արտասահմանյան գաղութաբնակները, որոնց դեռևս 1762թ. Եկատերինա 2-րդը իր հրովարտակով հրավիրել էր Ռուսաստան:

Այդպես Ռուսաստանում իրենց առանձին գաղութներն ստեղծեցին Նովոռոսիայի հայերը , հույները, Սարատովում՝ գերմանացիները: Կենտրոնի բարեբեր հողերի յուրացումը նպաստում էր սևծովյան նավահանգիստներից՝ Խերսոնից, Նիկոլաևից, Օդեսայից արտասահման ցորենի արտահանմանը:

18դ 2-րդ կեսից վերջնականապես անջատվեցին այն շրջանները, որոնցում առկա էին կոռը և բահրան : Կոռը, որ շաբաթվա մեջ հասնում էր 6 օրվա, տարածված էր սևծովյան շրջաններում : Դրանից դուրս շրջաններում կալվածատերերը գյուղացիներից պահանջում էին դրամատուրք: Երկրում կալվածքների և գյուղացիական տնտեսությունների կապը մեծացավ շուկայի հետ:

Նպատակ ունենալով ավելի մեծ շահույթ ստանալ ցորենի առևտրից՝ կալվածատերերը իրենց տնտեսություններում գյուղացիներին տեղափոխում էին ամսապարենի: Գյուղացուց վերցնում էին հողաբաժինը և նա ամսական չնչին պարենով աշխատում էր կալվածատիրոջ համար (1780-ական թթ) : Մինչև դարավերջ մոտ 5 անգամ մեծացավ նաև հարկը: Դրամ վաստակել հնարավոր էր արհեստով կամ էլ վարձու աշխատանքով: Գյուղացին ավելի էր օտարվում հողից, որն էլ բերում էր գյուղացիական տնտեսության քայքայմանը:

Առանձին կալվածատերեր ռացիոնալիզացնում էին իրենց տնտեսությունը, նրանք նպատակ ունեին մեծացնել իրենց եկամուտները՝ փորձելով ձեռք չտալ ճորտատիրական համակարգի հիմքերին: Նրանց ագարակներում կիրառվում էին տեխնիկական միջոցներ, նոր կուլտուրաներ էին մշակվում: Դրանում մեծ էր <<Ռուսաստանում հողագործության և շինարարության բարելավման համար ազատ տնտեսական հասարակության >> դերը, որը հիմնվել էր 1765թ. և գոյություն ուներ

մինչև 1917թ.: Տնտեսություններին կից կալվածատերերը ստեղծում էին մանուֆակտուրաներ, որտեղ օգտագործում էին ճորտ գյուղացիների աշխատանքը:

Այսպիսով ճորտատիրական տնտեսությունը յուրացնում էր աշխատանքի կազմակերպման նոր ձևեր ու մեթոդներ , որն էլ հանդիսացավ ճորտատիրական արտադրահարաբերությունների քայքայման պատճառներից մեկը:

Եկատերինա 2-րդի ժամանակ ընդունվեցին օրենսդրական ակտեր , որոնցով կարելի է ասել, որ ճորտատիրությունը հասավ իր գագաթնակետին: Ճորտը շատ քիչ էր տարբերվում ստրուկից:

1765թ. հրամանը թույլ էր տալիս ճորտատիրոջը իր գյուղացիներին առանց դատի աքսորել Սիբիր տաժանակրության : Ծաղկում էր գյուղացիների առք ու վաճառքը : Նրանց կարելի էր թղթախաղում տարվել , անմեղ տեղը պատժել : 1763թ.-ի հրամանով գյուղացիներն էին փակելու իրենց ապստամբությունների ճնշման ծախսերը: 1767թ.-ի հրամանով էլ գյուղացիները իրավունք չունեին իրենց կալվածատիրոջից բողոքել կայսրուհուն:[5]

բ/ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

1785թ-ին հրատարակվեց հատուկ <<Արհեստավորության կանոնադրություն>>, որը հանդիսանում էր <<Քաղաքների շնորհագրի>> մի մասը: 5 արհեստավորներ ընդգրկվում էին 1 արհեստակցական միության մեջ և ունենում էին իրենց ավագը:

Կառավարությունը դրանով նպատակ ուներ քաղաքի արհեստավորներին դարձնել այդ ժամանակվա ֆեոդալական հասարակության առանձին դաս : Քաղաքայինի կողքին զարգանում էին նաև արդյունաբերական գյուղերը:

Հարուստ գյուղացիների թվում , որոնցից շատերը ճորտեր էին , կային <<կապիտալիստ>> գյուղացիներ, որոնք հիմնում էին ձեռնարկություններ և վարձում էին համագյուղացիներին այնտեղ աշխատելու համար: Բայց այդ <<կապիտալիստ>> գյուղացին շարունակում էր մնալ իր տիրոջ ճորտը և նրան վճարել բազմահազարանոց հարկ: Շատ քչերն էին կարողանում նրանցից գնման միջոցով ձեռք բերել անձնական ազատություն: [5]

18-րդ դարի 2-րդ կեսին շարունակում էր աճել մանուֆակտուրաների թիվը երկրում: Դարավերջին նրանց թիվը 600-ից հասավ 2000-ի : Բայց նախկինի նման մեծ էր մանուֆակտուրաներում ճորտերի շահագործումը:

Արդյունաբերության մի շարք ճյուղերում 18-րդ դարի 2-րդ կեսին օգտագործվում էր վարձու աշխատանքը : Դա վերաբերվում էր տեքստիլ արդյունաբերությանը , որտեղ աշխատում էին տարագնաց գյուղացիները , որոնք , մնալով ճորտ, աշխատում էին տիրոջը տալիք գումարը՝ դրամատուրքը: Վարձու աշխատանքային հարաբերություններն արդեն բնորոշ էին կապիտալիստական արտադրահարաբերություններին:

1762թ. ին գործարաններին արդեն արգելվում էր գնել ճորտ գյուղացիներին: Սկսում էր ձևավորվել աշխատանքային շուկան: 18դ վերջին արդեն հաշվվում էր 400000 վարձու աշխատող: 1767թ առևտրում և արտադրության մեջ արգելվում էր մոնոպոլիան: Արհեստների և արդյունաբերության զարգացմանը նպաստեց 1775 թ հրամանը, որով թույլատրվում էր գյուղացիական արդյունաբերությունը: Դա բերեց գործարանատեր գյուղացիների և վաճառականների թվի ավելացմանը, ովքեր իրենց կապիտալը ներդնում էին արդյունաբերության մեջ:

Այսպիսով , կապիտալիստական արտադրահարաբերությունների ձևավորումն անդառնալի էր, բայց պետք է հիշել, որ կապիտալիզմի ձևավորումն ու հետագա զարգացումն ընթանում էր ճորտատիրական պետության ներսում:

գ/ ԱՐՏԱՔԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

.Նկատելի էր դառնում երկրի առանձին շրջանների մասնագիտացումը արդյունաբերության որևէ ճյուղում:

1754թ. ներքին մաքսային հարկերի վերացումը նպաստեց համառուսական շուկայի զարգացմանը:

Մերձբալթիկայի և մերձսևծովյան նավահանգիստներով Ռուսաստանը ակտիվորեն իրականացնում էր արտաքին առևտուր: Արտահանում էր մետաղ, փայտանյութ, գործվածքներ, կաշի ,հաց : Ներմուծում էր մետաքս, ներկեր, շաքար , մետաղյա իրեր և այլն: Առևտրական առաջատար գործընկերը 18դ 2-րդ կեսին Անգլիան էր:

դ/ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

Իշխանական ապարատն ամրապնդելու, պատերազմներ վարելու , արքունիքը պահելու և պետական այլ կարիքները հոգալու համար անհրաժեշտ էին մեծ միջոցներ: 18-դ 2-րդ կեսին պետական գանձարանի եկամուտները մեծացան 4 անգամ , իսկ ծախսեր ՝ 5 անգամ:

Եկատերինան բյուջեի քրոնիկ դեֆիցիտը փորձում էր փակել ավանդական միջոցներով, որոնցից մեկը թղթադրամների թողարկումն էր: 1769թ Ռուսաստանում հայտնվեցին առաջին թղթադրամները, որոնք արժեզրկեցին ռուբլին: 2-րդն այն էր , որ Եկատերինան սկսեց արտաքին վարկ վերցնել: Առաջին վարկը 1769թ Հոլանդիայից էր:

Ռուսաստանի բյուջեն բացարձակ եվրոպական միապետությունների նման էր . եկամուտը գալիս էր հարկերի բարձրացումից, իսկ ծախսերը կատարվում էին առաջին հերթին բանակի , նավատորմի , կառավարությանը և արքունիքին պահելու համար: Ամենաչնչին մասը բաժին էր ընկնում կրթությանը, գիտությանը, մշակույթին:[5]

Ե/ ԴԱՍԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Յուրաքանչյուր դաս Ռուսաստանում կազմում էր փակ համակարգ , որով ձեռք էր բերում որոշակի իրավունքներ և արտոնություններ: Դրանք ամրագրվում էին օրենքով և որոշումներով:

18դ դասային կառուցվածքի ամրապնդումը հնարավորություն էր տալիս իշխանությունը պահել ազնվականության ձեռքում : Դա տեղի էր ունենում Ֆրանսիական հեղափոխության նախօրեին, որը կոչ էր անում <<հավասարություն, ազատություն , եղբայրություն>>, այսինքն դասային սահմանների ջախջախում:

զ/ ԼՈՒՍԱՎՈՐՅԱԼ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Լուսավորյալ միապետության էության շուրջ կան մի քանի կարծիքներ՝

1. Լուսավորյալ միապետությունը օգտագործելով սոցիալական դեմոգոգիան և լուսավորականների լոզունգները՝ նպատակ ուներ պահպանել նախկին կարգերը,
2. Լուսավորյալ միապետությունը, ազնվականների շահերը պաշտպանելով, միաժամանակ նպաստում էր բուրժուազիայի զարգացմանը:
3. Ակադեմիական տեսանկյունից լուսավորյալ միապետությունը բացարձակ միապետության զարգացման փուլերից մեկն է:[5]

Է/ ԵԿԱՏԵՐԻՆԱ 2-ՐԴԸ ՈՐՊԵՍ ԼՈՒՍԱՎՈՐՅԱԼ ՄԻԱՊԵՏ

Երբ Եկատերինա 2-րդը գահ բարձրացավ, Ռուսաստանում ծանր ժամանակներ էին: Այդ մասին նա հուշերում գրում է. <<1762թ.-ին ցամաքային

բանակը Պրուսիայում էր և ռոճիկի 2/3-ը չէր ստացել… Կայսրության ներսում վանական և գործարանային գյուղացիները, համարյա բոլորը բացահայտ չէին ենթարկվում իշխանություններին, նրանց էին միանում նաև ճորտերը>>: Այսինքն նա պետք է ճիշտ քաղաքականություն մշակեր, որը կհամապատասխաներ նոր ժամանակներին: Հենց այդ քաղաքականությունը կոչվեց <<Լուսավորյալ միապետություն>>:[5]

Եկատերինա 2-րդը որոշեց Պյոտր 1-ինի նման շրջագայել երկրում, որպեսզի մոտիկից ծանոթանար երկրի իրական վիճակին: Նա եղավ Յարոսլավլում, Մեծ Ռոստովում, Մերձբալթիկայում, Վոլգայով անցավ Տվերից Սիմբիրսկ ընկած ճանապարհը: Նրան թվում էր որ Ռուսաստանը <<մաքուր տախտակ>> է լուսավորյալ միապետի համար՝ լավագույն գործունեության վայր: Բայց իրականում ամեն ինչ ավելի դժվար էր: Նա շարժվում էր դանդաղ, բայց ճիշտ ճանապարհով դեպի ավելի ռացիոնալ կառավարման համակարգը:

Եկատերինա 2-րդը մեծ տեղ էր տալիս օրենսդրությանը: Ըստ նրա՝ օրենքները ստեղծվում են <<քաղաքացիներին դաստիարակելու>> նպատակով: Պատմիչների հաշվարկով Եկատերինա 2-րդը հրապարակում էր ամիսը մոտ 12 օրենք:[5]

Նրա առաջին բարեփոխումներից էր Սենատի բաժանումը 6 դեպարտամենտների՝ առանձին լիազորություններով և իրավասությունրով: Դրանով բարելավվում էր երկրի կառավարումը կենտրոնից, բայց Սենատը զրկվում էր օրենսդրական գործառույթից, որն աստիճանաբար անցնում էր կայսրուհուն:

Եկատերինա 2-րդը գտնում էր, որ ամբողջ երկիրը պետք է կառավարվի ընդհանուր սկզբունքով և այդ պատճառով էլ 1764թ.-ին վերացրեց ուկրաինական հետմանությունը: Վերջին հետման Ռազումովսկին պաշտոնանկ արվեց և նրա փոխարեն նշանակվեց գեներալ-նահանգապետ: Դրանով վերացվեց Ուկրաինայի ինքնավարությունը:

1762թ.-ին կայսրուհին հանդես եկավ հայտարարությամբ, որ չի ցանկանում ամբողջովին կրկնօրինակել Պյոտր 1-ինին. նա հատկապես դեմ էր պատիժներին, որոնք իրագործվում էին կտտանքների միջոցով, դրանք համարելով քաղաքակրթությանը անհարիր երևույթ:

1764թ.-ին եկեղեցապատկան գյուղացիների մասսայական անհանգստությունն ու ելույթները կանխելու նպատակով Եկատերինա 2-րդը բռնագրավեց եկեղեցական տիրույթները հօգուտ պետության: Այսուհետ եկեղեցապատկան գյուղացիները կոչվեցին տնտեսական, քանի որ նրանց կառավարում էր Տնտեսական կոլեգիան: Այս քայլով նա շարունակում էր Պյոտր 1-ինի՝ եկեղեցական պետությանը ենթարկելու քաղաքականությունը:

Իրեն հռչակելով ուղղափառների պաշտպան, նա կրոնական հանդուրժողականություն հայտարարեց, շատ լավ հասկանալով, որ

Ռուսաստանի կազմի մեջ մտնող մուսուլմանները կցանկանան պահպանել իրենց կրոնը: Եկատերինա 2-րդը ընդառաջում էր նաև կաթոլիկներին ու բողոքականներին:[3]

1765թ.-ին երկրում սկսեցին հստակ սահմանազատել հողատարածքները և դրանք իրավաբանորեն ամրակցել հողատիրոջը: Դրանով հողատիրությունը պարզեցվում էր, և դադարեցվում էին հողային վեճերը: Բայց Եկատերինա 2-րդի ամենախոշոր միջոցառումը նոր օրենսդրություն կազմելու համար հանձնաժողովի հրավիրումն էր:

1767թ.-ին հրավիրվեց <<Նոր օրենսդրության նախագիծը կազմող հանձնաժողով>>: Այն զբաղվելու էր օրենքների մշակմամբ, որոնք փոխարինելու էին վաղուց հնացած Համաժողովրդական օրենքներին (դեռևս 1649թ.-ին Ալեքսեյ Միխայիլովիչի կողմից ստեղծված): Հանաձնաժողովի անդամներին էր ուղղված Եկատերինա 2-րդի հանրաճանաչ <<Նակազը>>, որը օրենսդրական ուժ չուներ, բայց դարձավ ռուսական պետության ապագա <<օրենքների ոգին>> և լուսավորյալ միապետության քաղաքակաության տեսական հիմնավորումը:

<<Նակազը>> ելնում էր այն դրույթից, որ բարձրագույն իշխանությունը <<ստեղծված է ժողովրդի համար>>: Ըստ հեղինակի՝ բարձրագույն իշխանությունը կարող է լինել միայն բացարձակ միապետություն, <<ավելի լավ է ենթարկվել մեկին, քան հաճոյանալ մի քանիսին>>:[5]

Օրենքների ստեղծման նպատակն այն էր, որ յուրաքանչյուր պետական ակտը ելնում էր ամբողջ հասարակության և յուրաքանչյուր ռուսի շահերից: Եկատերինա 2-րդի ազատության ձևակերպումը որպես իրավունք համապատասխանում է ժամանակակից դեմոկրատական պետության սահմանադրական նորմերին <<անել այն, ինչ օրենքը թույլ է տալիս>>: Պետական ազատությունը քաղաքացու ապահովությունն է. որպեսզի մարդն ազատ լինի, օրենքն այնպես պետք է կազմվի, որ մարդիկ մեկը մյուսից չվախենան, այլ բոլորը վախենան օրենքից>>:[3]

<<Նակազում>> մանրամասն քննարկվում է դատավարությունը, հեղինակը քննադատում է մահապատիժը: <<Նակազը>> մի քանի անգամ հրատարակվել է Եկատերինա 2-րդի օրոք: Թեև բնագիրը ֆրանսերեն էր, բայց Ֆրանսիան արգելեց աշխատության տարածումը: Թագավորական իշխանությունները նրանում տեսնում էին բացարձակ միապետության դեմ վտանգ: Այդ փաստաթուղթը շատ առաջ էր անցել ժամանակից:[3] Ինքը՝ կայսրուհին, շուտով հասկացավ ,որ վտանգավոր գործ է սկսել , քանի որ ժողովուրդը դեռ չէր հասել այնպիսի մտավոր զարգացման , որ ըմբռներ օրենքների անհրաժեշտությունը : Իսկ ազնվականությունն ու կալվածատերերն սկսում էին դժգոհել նրանից , որ կարող էին սահմանափակվել իրենց իրավունքները գյուղացիների նկատմամբ: Այնուամենայնիվ , Եկատերինա 2-րդը չհրաժարվեց <<Նակազի >>

բարեփոխումներից . լրացրեց 21 և 22 գլուխները ծախսերի , եկամուտների , պետության կառավարման և այլնի մասին:

Օրենսդիր հանձնաժողովը սկսեց աշխատանքները 1767թ մոսկովյան Կրեմլում: 5-րդ նստաշրջանում կայսրուհին հռչակվեց <<Հայրենիքի մեծն, բարձրագույն , իմաստուն մայր>> , որը նշանակում էր Եկատերինա 2-րդի ճանաչումը ազնվականության կողմից:

Անսպասելի Եկատերինա 2-րդի և նրա համախոհների քննարկման նյութ դարձավ գյուղացիների հարցը: Մի քանի դեպուտատներ քննադատեցին ճորտատիրության որոշ կողմեր: Այսպես Մասլովն առաջարկեց ճորտ գյուղացիներին հանձնել հատուկ կոլեգիայի , որը նրանց հարկերից կալվածատիրոջը ռոճիկ կտա: Այսինքն , ճորտերը ազատություն էին ստանում կալվածատիրոջ իշխանությունից: Մի շարք դեպուտատներ կողմ էին գյուղացիների պարհակները հստակ կանոնակարգելուն : Իսկ մեծ մասը պաշտպանում էր ճորտատիրությունը և պահանջում էր ընդլայնել նրանց դասային իրավունքները: Հանձնաժողովի աշխատանքները շարունակվեց 1 տարուց ավելի: Թուրքիայի դեմ պատերազմը պատրվակ դարձնելով, 1768թ այն ցրվեց անորոշ ժամանակով , այդպես էլ նոր օրենսդրություն չսահմանելով : Բայց ստեղծված մասնավոր հանձնաժողովները , որոնք զբաղվում էին կոնկրետ օրենքով , գոյատևեցին մինչև Եկատերինայի մահը:

Այսպիսով , կայսրուհին փորձում էր 18դ 2 –րդ կեսին մոդեռնիզացնել երկիրը, ստղծել օրինական ինքնակալ միապետություն հենվելով բնության և հասարակության մասին եղած գիտելիքների այն ժամանակվա մակարդակի վրա:

ը/ Ն. Ի. ՆՈՎԻԿՈՎԸ <<ՎՍՅԱԿԱՅԱ ՎՍՅԱՉԻՆԱՅԻ >> ԴԵՄ

Եկատերինա 2-րդը մշակույթի մեջ վարելով լուսավորության քաղաքականություն , զարկ տվեց թարգմանչական արվեստի զարգացմանը : Օտար հեղինակների թարգմանություններն ու հրատարակման ծախսերը կառավարությունը վերցրեց իր վրա: Մեծ հնարավորություններ ստեղծվեցին նաև հայրենական հեղինակների համար, կայսրուհին ֆինանսավորում էր գիտական նախագծերը: Եկատերինա 2-րդի ժամանակ գիտնականները հնարավորություն ստացան աշխատել պտական արխիվային փաստաթղթերի հետ :[3]

Ցանկանալով ձևավորել հասարակության կարծիքը՝ Եկատերինա 2-րդը դիմեց ժուռնալիստիկային : 1769թ. նա սկսեց հրատարակել <<Վսյակայա վսյաչինա>> երգիծական ամսագիրը, որի գլխավոր նպատակն էր ծաղրել մարդկանց արատներն ու թուլությունները:

Ժուռնալիստիկայի նման մոտեցման դեմ հանդես եկավ Ն.Ի. Նովիկովը: Պուշկինը գրում էր , որ Նովիկովը նրանցից մեկն էր , <<ով հայրենիքում առաջինն սկսեց լուսավորություն տարածել>>:[5] 17դ 60-70-ական թթ. իր գործունեության հիմնական ուղղություն դարձրեց առանձին երևույթների ու անձանց քննադատությունը: Նովիկովյան <<Բոռ>> և <<Գեղանկարիչ >> ամսագրերում կարելի է հանդիպել կալվածատերորի, ճորտատերերի կամայականությունների, գյուղացիների ծանր վիճակի և անօրինականության քննադատությանը: <<Բոռի>> հանրահայտ բնաբանն էր. <<Նրանք աշխատում են , իսկ դուք նրանց աշխատանքը ուտում եք>>, որը պարզ արտացոլում էր լուսավորական հայացքներ: Նովիկովի ամսագրերի և <<Վսյակայա վսյաչինայի>> միջև բարոյական հաղթանակը լուսավորականի կողմն էր , որն էլ կանխորոշեց Եկատերինայի հրաժարումը լրագրողական գործունեությունից: Բայց այդ հաղթանակը , ինչպես նաև Նովիկովի կապը մասոնների ու Պավելի հետ , դարձավ նրա ձերբակալման պատճառը: Նա փակվեց Շլիսելբուրգյան ամրոցում , որպես անհայտ կալանավոր և այնտեղ մնաց 4 տարի (1792-1796թթ) :

Ռուս ճանաչված լուսավորական Նովիկովի գործունեությունը ցույց է տալիս , որ 18դ 2-րդ կեսի Ռուսաստանում կար հասարակական կարծիք, ձևավորվել էր ռուսական ինտելիգենցիան և հակաճորտատիրական գաղափարախոսություն, որոնք էլ նախապատրաստեցին առաջին ռու հեղափոխական Ա. Ն. Ռադիշչևի և դեկաբրիստների ապստամբությունները:

թ/ Ե. ՊՈՒԳԱՉՈՎԻ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ 1773-75ԹԹ.

Ճորտատիրության ճնշման ուժեղացումը հանգեցրեց դասակարգային հակասությունների սրմանը Ռուսաստանում:

Մինչ գյուղացիական պատերազմը, մեկ տասնամյակի ընթացքում 1762-72թթ. եղել էին ճորտ գյուղացիների մոտ 40 ապստամբություններ: Հաճախակի էին դարձել ճորտերի փախուստն իրենց տերերից : Ժողովրդի մեջ տարածվում էին կեղծ հրովարտակներ շուտափույթ ազատության մասին, հայտնվում էին <<Պյոտր 3-րդներ>> , որոնք խոստանում էին բարելավել ճորտերի վիճակը: Որոշ կալվածքներում տերերը սպանվում էին սեփական ճորտերի կողմից : Այսպիսի իրավիճակում բռնկվեց Ե. Պուգաչովի գլխավորած գյուղացիական ապստամբությունը: 1773-75թթ. ժողովրդական շարժմանը մասնակցում էին գյուղացիներ , Ուրալի լեռնային հանքերում աշխատողներ, Պովոլժիեի և մերձուրալյան ճնշված ժողովուրդներն ու կազակները:

Ե. Պուգաչովը ծնվել էր Դոնի Զիմովեյսկում աղքատ կազակի ընտանիքում : 17 տարեկանից մասնակցել էր Պրուսիայի և Թուրքիայի դեմ մղված պատերազմներին : Նա հաճախ հանդես էր գալիս իբրև գյուղացիների և հասարակ կազակների պաշտպան , որի համար էլ ձերբակալվել էր : 31 տարեկանում նա փախել էր Կազանի բանտից դեպի Ուրալ, որտեղ ներկայացել էր որպես Պյոտր 2-րդ: 2 շաբաթ անց նա արդեն ուներ 2500-ոց բանակ և 29 թնդանոթ: Պուգաչովը իր հետևորդների մեջ կրոնական խտրականություն չէր դնում , դրա համար էլ նրա դրոշի տակ կողք-կողքի կռվում էին և ուղղափառները, և մուսուլմանները, և հեթանոսները: Բոլորին միավորում էր ճորտատիրության դեմ ատելությունը: Երկրում , վարչաբյուրոկրատական ապարատի հաստատման պայմաններում , ապստամբների առաջնորդը օգտագործում էր երկրի զարգացման նոր փուլին բնորոշ պետական ակտերի ձևերը՝ հրովարտակներն ու հրամանները:

Պատմագիրները Պուգաչովի ամենահայտնի մանիֆեստը անվանել էին <<գյուղացիների պարգևագիր>>, ըստ որի <<ովքեր նախկինում կալվածատիրոջը պատկանող գյուղացիներ էին>> նա նվիրում էր <<ազատություն և անկախություն>>, հողեր, արոտավայրեր, ձկնորսական և աղի լճեր, <<առանց վաճառքի և պարհակի>>: Մանիֆեստն ազատում էր երկրի բնակչությանը <<հարկերից և ճնշումներից , որոնք պատճառում էին չարագործ ազնվականներն ու քաղաքական կաշառականները >>: [2]Ապստամբների հասարակական կյանքի ուտոպիստական իդեալը վերադարձն էր դեպի գյուղացիական համայնքները , որոնք գոյություն ունեին կազակական համայնքներում:

Գյուղացիական պատերազմն սկսեց Պուգաչովի կողմից Յաիկում մի քանի մանր քաղաքների գրվմամբ և Օրենբուրգի պաշարմամբ (Ռուսաստանի հարավ-արևելքի խոշոր ամրոց):

Օրենբուրգն ազատագրելու նպատակով ուղարկված զորքը ՝ գեներալ Վ.Ա. Կարի գլխավորությամբ ջախջախվեց: Սալավատ Յուլանի գլխավորած բաշկիրների խումբը , որն ուղեկցում էր գեներալ Կարին , միացավ ապստամբներին: Պուգաչովի բանակը կազմված էր կազակական զորքի օրինակով: Օրենբուրգի մոտ այն ուներ իր շտաբը՝ Ռազմական կոլեգիան : Պուգաչովյան բանակն ուներ բարձր կարգապահություն և կազմակերպվածություն, բայց ընդհանուր շարժումը , նախորդների նման , տարերային բնույթ էր կրում:

Եկատերինա 2-րդը , վախենալով գյուղացիական շարժման լայն թափից, կառավարական զորքերի հրամանատար նշանակեց գեներալ Ա.Ի. Բիբիկովին, իսկ իրեն հռչակեց <<Կազանի կալվածատեր>>, թագավորական իշխանության և ազնվականության շահերը պաշտպանելու նպատակով:

1774թ մարտին Պուգաչովը պարտություն կրեց Օրենբուրգի շրջանում Տատիշչևի ամրոցի մոտ, որից հետո էլ սկսվեց գյուղացիական պատերազմի 2-րդ փուլը : Ապստամբները նահանջում էին Ուրալ , որտեղ նրանց բանակը համալրվում էր : Պուգաչովը պարտություն կրեց և սկսեց նահանջել : Նա <<փախչում էր , բայց այդ փախուստը թվում էր նրա արշավանքը >>, - գրում էր Պուշկինը: Պովոլժիեի գյուղացիներն ու ժողովուրդները նրան ընդունում էին իբրև ազատարարի: Պուգաչովը շարժվում էր դեպի Դոն՝ հույս ունենալով այնտեղ ստանալ կազակների աջակցությունը: Այդ ընթացքում նրանք նոր տարածքներ գրավեցին ՝ Սարանսկը, Պենզան, Սարատովը , Ալատիրը: Երկրում անկայուն վիճակ ստեղծվելու պատճառով ռուս-թուրքական ռազմադաշտից հետ էր կանչվել Սուվորովը:
Ցարիցինում վերջին պարտությունից հետո Պուգաչովը հավատարիմ մարդկանցով փորձեց թաքնվել Վոլգայից այն կողմ , բայց ունևոր կազակները կայսրուհու բարեհաճությունը շահելու նպատակով Պուգաչովին մատնեցին: Վերջինս մահապատժի ենթարկվեց Մոսկվայում :

Պուգաչովյան ապստամբությունը պարտվեց , որովհետև նախորդների նման պայքարի հստակ ծրագիր չուներ , տարերային էր , տեղայնացված էր և վատ զինված : Բայց գյուղացիական պատերազմներն ստիպեցին Եկատերինա 2-րդին կատարել մի շարք բարեփոխումներ , որով կարգավորվելու էր կառավարման օրգանների կենտրոնացված ու միասնական աշխատանքը կենտրոնում և տեղերում ու օրինականացվելու էր բնակչության դասային իրավունքները:

Ժ/ ԵԿԱՏԵՐԻՆԱ 2-ՐԴԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Նահանգային բարեփոխում:

Կենտրոնում և տեղերում միջոցներ ձեռնարկվեցին ազնվականության դիրքերի ամրապնդման համար: Առաջին անգամ ռուսական օրենսդրության մեջ հայտնվեց փաստաթուղթ, որը հստակեցնում էր պետական կառավարման և դատարանների , տեղական մարմինների գործունեությունը: Այդ համակարգը գոյատևեց մինչև 19դ 60-ական թթ. Մեծ բարեփոխումը: Իսկ Եկատերինա 2-րդի կատարած վարչական բաժանումը պահպանվեց մինչև 1917թ: 1775թ նոյեմբերի 7-ին ընդունվեց <<Որոշում համառուսաստանյան կայսրության նահանգի կառավարման մասին>>: Երկիրը բաժանվում էր նահանգների , որոնցից յուրաքանչյուրում պետք է ապրեին 300-400 հազար արական սեռի ներկայացուցիչ:[5] Նահանգը ղեկավարում էրնահանգապետը , որն անմիջապես ենթարկվում էր կայսրուհուն և ուներ բավականին մեծ լիազորություններ: Մայրաքաղաքը և մի քանի խոշոր նահանգներ ղեկավարվում էին գեներալ-նահանգապետի կողմից: Նահանգապետին էր

ենթարկվում նահանգի դատախազը : Առաջին անգամ ստեղծվել էին պետական հիմնարկներ , որոնք կատարում էին սոցիալական գործառույթներ: Դպրոցներով, հիվանդանոցներով, անկելանոցներով զբաղվում էր հասարակական խնամակալության գերատեսչությունը (Պրիկազ):

Նահանգը բաժանվում էր գավառների : Քանի որ գավառական կենտրոն հանդիսացող քաղաքներ քիչ կային , ուստի Եկատերինա 2-րդը շատ խոշոր գյուղական համայնքները վերածեց քաղաքների և դարձրեց վարչական կենտրոններ:

Եկատերինա 2-րդը օգտագործելով իշխանությունների բաժանման տեսությունը և կատարելագործելով կառավարման համակարգը առանձնացրեց դատական մարմինը գործադիր իշխանությունից:

Բոլոր դասերը , բացի ճորտերից (նրանց համար տերն ու դատավորը ճորտատերն էր) , պետք է մասնակցեին տեղական կառավարմանը: Յուրաքանչյուր դաս ունենում էր իր դատարանը: Գերագույն դատական մարմինը երկրում Սենատն էր , իսկ նահանգներում քրեական ու քաղաքացիական դատարանները, որոնց անդամները նշանակվում էին պետության կողմից:

Ռուսաստանի համար նորություն էր Խղճի դատարանը, որը կոչ էր անում դադարեցնել կռիվները, երկպառակությունները և հաշտվել: Այն դասային չէր: Իշխանությունների տարանջատումը լրիվ չէր, քանի որ նահանգապետը կարող էր միջամտել դատարանի գործերին: [5]

Առանձին վարչական միավոր էր քաղաքը: Այն ղեկավարում էր քաղաքագլուխը, որն ուներ լայն իրավունքներ ու լիազորություններ: Քաղաքում առկա էր խիստ ոստիկանական հսկողություն: Քաղաքն էլ իր հերթին բաժանվում էր շրջանների ու թաղամասերի :

Նահանգային բարեփոխման արդյունքում դադարեցին գործել բոլոր կոլեգիաները, բացի արտաքին գործերի , ռազմական և ծովային կոլեգիաներից: Կոլեգիաների գործառույթներն անցան նահանգային մարմիններին: 1775թ վերացվեց Զապորոժյան Սեչը և կազակների մեծ մասն անցավ Կուբան :

Երկրի տարածքում հաստատված կառավարման նոր համակարգը ամրապնդում էր ազնվականների իրավունքները տեղերում, որի նպատակն էր կանխել հետագա գյուղացիական խռովությունները: Ավելի քան 2 անգամ ավելացավ պաշտոնյաների թիվը տեղական մարմիններում:

ի/ ԱԶՆՎԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ և ՔԱՂԱՔՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՇՆՈՐՀԱԳՐԵՐԸ

1785թ. Եկատերինա 2-րդի ծննդյան օրը միաժամանակ հրատարակվեցին ազնվականների և քաղաքների շնորհագրերը: Հայտնի է, որ կայսրուհին

կազմել էր նաև պետական գյուղացինրի շնորհագիրը , բայց այն այդպես էլ չհրատարակվեց , որպեսզի չառաջացնի ազնվականների դժգոհությունը: Հրատարակված շնորհագրերով նա կարգավորում էր դասակարգային իրավունքների և պարտավորությունների մասին օրենքները <<Ռուս ազնվականների իրավունքների , ազատությունների ու արտոնությունների մասին շնորհագրի>> համաձայն ազնվականությունը ազատվում էր պարտադիր ծառայությունից, մարմնական պատիժներից և անձնական հարկերից: Կալվածքը համարվում էր տիրոջ լիիրավ սեփականությունը, որտեղ նա կարող էր հիմնել իր սեփական գործարանը , ֆաբրիկան : Ազնվականները կարող էին դատվել միայն իրենց հավասարների հետ: Առանց ազնվականական դատարանի չէին կարող զրկել նրան ազնվական տիտղոսից , կյանքից և կալվածքից: Նահանգի և գավառի ազնվականները իրավունք ունեին ընտրելու և ընտրվելու տեղական ինքնակառավարման մարմիններում : Նահանգային և գավառային ազնվականների ժողովները իրավունք ունեին իրենց կարծիքը ներկայացնելու կառավարությանը:

Ազնվականությանը տրված շնորհագիրը իրավաբանորեն ձևակերպում էր Ռուսաստանում ազնվականատիրությունը:

<<Ռուսական կայսրության քաղաքների իրավունքների ու շահերի շնորհագիրը>> առանձնացնում էր քաղաքային բնակչության իրավունքներն ու պարտավորությունները և քաղաքների կառավարման համակարգը: Քաղաքաբնակները 3 տարին մեկ ընտրում էին ինքնակառավարման մարմիններ՝ համընդհանուր քաղաքային դումա, քաղաքագլուխ և դատավոր : Քաղաքային դուման վճռում էր բարեկեցության , կրթության , առևտրի կանոնակարգման և այլ հարցերը: Քաղաքի շնորհագիրը հսկողության տակ էր դնում քաղաքային բնակչությանը: Իրականում քաղաքային իշխանությունը գտնվում էր քաղաքագլխի և նահանգապետի ձեռքում:

Լ/ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

Եկատերինա 2-րդը երկրի կյանքում մեծ տեղ էր տալիս կրթությանը , համարելով , որ <<ամեն չարիքի և բարու հիմքում ընկած է դաստիարակությունը>> : Բեցկոյի ծրագրով Մոսկվայում և Պետերբուրգում բացվեցին դաստիարակչական տներ , Սմոլնիում օրիորդաց ինստիտուտ, Մոսկվայում առևտրական ուսումնարան և այլն :

Դպրոցական բարեփոխման սկիզբը դրվեց 1782-86թթ: Գավառներում բացվեցին երկամյա ժողովրդական ուսումնարաններ, նահանգներում քառամյա գլխավոր ժողովրդական ուսումնարաններ: Բոլոր դպրոցներում դասերն անց էին կացվում դասարանային համակարգով , սկսվում և

ավարտվում էին նույն ժամանակահատվածում , մշակվում և կազմվում էին միասնական ծրագրեր, դասագրքեր, մեթոդիկաներ:

Այս դպրոցը դարձավ Ռուսաստանում միջնակարգ կրթության հիմքը: Բայց ինչպես մյուս ոլորտնորը , կրթությունն էլ դասական բնույթ էր կրում:

խ/ Ա.Ն. ՌԱԴԻՇՉԵՎ

Գյուղական կռիվները , ռուս և ֆրանսիացի լուսավորականների գաղափարները , Ֆրանսիական մեծ հեղափոխությունը, ԱՄՆ-ի անկախության պատերազմը նպաստեցին Ռադիշչևի հայացքների ձևավորմանը: Իր աշխատություններում նա կոչ էր անում հեղափոխության միջոցով տապալել ինքնակալությունը, վերացնել ճորտությունը և հողը տալ գյուղացիներին: Հայրենիքի որդի էր համարում նրան, ով պայքարում էր ժողովրդի ազատության համար:

Եկատերինա 2-րդը Ռադիշչևին համարում էր ավելի վտանգավոր , քան Պուգաչովն էր : Դրա համար նրան ձերբակալեցին և աքսորեցին : Հիմա արդեն Եկատերինա 2-րդը դաժանորեն պայքարում էր խոսքի ազատության դեմ , դրանով հակասելով ինքն իրեն . <<ավելորդ խստությունը կճնշի միտքը, գրելու ցանկությունը կվերացնի, և տաղանդավոր միտքը կմարի>> : Իր մահից մի քանի շաբաթ առաջ նա հրաման էր ստորագրել , որը սահմանափակում էր գրատպությունը, արտասահմանյան գրականության ներմուծումը:[3]

Այսպիսով՝ լուսավորյալ միապետությունը որպես վատ դերասան , չկարողացավ կատարել իր դերը այն ներկայացման մեջ , որի և հեղինակը, և բեմադրողը ինքն էր: Դա հավասար էր Եկատերինա 2-րդի քաղաքական մահվանը, որը համընկավ նրա ֆիզիկական մահվան հետ:[1]

ՎԵՐՋԱԲԱՆ

Սակայն, ռեալ գնահատելով Եկատերինա 2-րդի ժամանակաշրջանը, կարելի է ասել, որ նրա օրոք Ռուսական կայսրությունը հասավ աննախադեպ վերելքի : Արտաքին քաղաքականության մեջ Ռուսաստանը ցույց տվեց , որ ինքը ի վիճակի է ինքնուրույն կառավարել իր երկիրը և , ինչպս Եկատերին ա2-րդն է նշում , ժամանակը բոլորին ապացուցեց , որ Ռուսաստանը <<ոչ մեկի պոչից քարշ չի գալիս>>: Լուսավորյալ միապետուհու խոսքը համընկնում էր գործին , որը ցայտուն կերպով դրսևորվեց անգլո-ամերիկյան զինված հակամարտության Անգլիայի դեմ պատերազմի , Ֆրանսիական հեղափոխության և հակաֆրանսիական դաշինքի ձևավորման ընթացքում ռուսական դիվանագիտական մարտավարության ժամանակ:

Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ Եկատերինա 2-րդը կարողացավ իր երկիրը զերծ պահել սոցիալական ցնցումներից, դիվանագիտական կապերը խզեց Ֆրանսիայի հետ և թույլ էլ չտվեց, որ Ռուսաստանը ներքաշվի նրա դեմ պատերազմի մեջ, որին ձգտում էին եվրոպական միապետները:

Թեև կառավարման սկզբում Եկատերինա 2-րդը հույս ուներ իր երկրի համար ապահովել խաղաղ զարգացման ժամանակաշրջան, այնուամենայնիվ չկարողացավ դրան հասնել , բայց վարած բոլոր պատերազմներն ավարտվեցին թե զենքի , և թե դիվանագիտական հաղթանակներով: Արդյունքում , արտաքին քաղաքականության մեջ այն նպատակները, որ Եկատերինա 2-րդը ուներ կառավարման սկզբում , կարողացավ իրագործել: Բավականին ընդլայնվեցին Ռուսական կայսրության սահմանները ի հաշիվ հարևան պետությունների: Նա ամուր ոտքով կանգնեց սևծովյան և ազովյան շրջաններում , միավորեց ուկրաինական և բելառուսական հողերը, ամրապնդեց դիրքերը Մերձբալթյան երկրներում: Այս հաղթանակները նպաստեցին ռուսական ոգու և հայրենասիրության բարձրացմանը : Ռուսաստանը վերականգնեց եվրոպական հարցերում իր ազդեցիկ ձայնի իրավունքը, և աշխարհն սկսեց հաշվի նստել նրա հեղինակավոր կարծիքի հետ:

Ներքին քաղաքականության մեջ Եկատերինայի քայլերն ուղղված էին երկրի տնտեսական զարգացմանը: Նրա օրոք Ռուսաստանում ձևավորվում էին կապիտալիզմի սաղմերը, զարգանում էր մանուֆակտուրային արտադրությունը , ներքին և արտաքին շուկան : Եկատերինայի կատարած բարեփոխումներն ու ստեղծած օրենսդրությունը ամրացնում էր կենտրոնացված իշխանության դիրքերը երկրում , հստակ տարանջատում էր յուրաքանչյուր պաշտոնավարող սուբյեկտի ֆունկցիաները:

Եկատերինա 2-րդը գիտակցում էր , որ առանց խորը ցնցումների հնարավոր չէ արմատական բարեփոխումներ անցկացնել օրենսդրական համակարգում, դրա համար էլ նա կրճատեց իր ծրագիրը, հասկանալով ,որ չի կարող իր վրա վերցնել ռուսական իշխանության բոլոր խնդիրները: Երկրում ավելի ամրապնդվեցին ազնվականների դիրքը և էլ ավելի վատ վիճակում հայտնվեցին ճորտերը: Վերջիններիս խնդիրը այդպես էլ վերջնական լուծում չստացավ Եկատերինա 2-րդի ժամանակ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (18-19դդ) Մ. Մուրադյան , է. Մինասյան , Երևան 2005թ.
2. Екатерина II , О величии Росии , М 2003г.
3. Императрица Екатерина II, под ред. М. Яновского, Москва, 2003 г.
4. История дипломатии т.1, Москва, 1959г.
5. История России , А. С. Орлов, В.А. Георгиев и др., Москва , 2006г.